ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 11—12, 1959 Общественные науки

Գ. Հ. Հովհաննիսյան

ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ «ՊՐԱՎԴԱՆ» ԵՎ ՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ (1912—1914 թթ.)

«Բանվորները և «Պրավդա»-ն» հոդվածում Վ. Ի. Լենինը բնորոշել է այն խնդիրները, որոնք պետք է գտնվեն «Պրավդայի» ուշադրության կենտրոնում։ Նա նշում է, որ «բանվորական թերթը բանվորական տրիբունա է։ Ամբողջ Ռուսաստանի առաջ պետք է այստեղ մեկը մյուսի հետևից դնել բանվորական կյանքի հարցերն ընդհանրապես և բանվորական դեմոկրատիայի հարցերը մասնավորապես»[1]։ Ղեկավարվելով պարտիայի առաջնորդի այդ կարևոր ցուցումով՝ «Պրավդան» առաջ էր քաշում և բանվորական հետևողական դեմոկրատիայի, ռևոլյուցիոն մարքսիզմի դիրքերից քննարկում ու լուսաբանում Ռուսաստանի ներքին և արտաքին կյանքին վերաբերող բոլոր կարևորագույն հարցերը։ Փաստորեն «Պրավդան» ուղղություն էր տալիս պարտիական կազմակերպությունների աշխատանքներին և ղեկավարում պրոլետարիատի դասակարգային պայքարը։ Գրավելով սկզբունքային, բոլշևիկյան դիրքեր, հետևողականորեն պաշտպանելով բանվորական դեմոկրատիայի շահերը, «Պրավդան» դրանով ապահովեց Ռուսաստանի բանվոր դասակարգի ճնշող մեծամասնության համակրանքը։ Ռուսաստանի պրոլետարիատը հանձինս «Պրավդայի» տեսնում է իր շահերի պաշտպանին, պաշտպանում նրա գիծը, հավանություն տալիս նրան, այն համարելով իրենը։

Մեծ են բոլշևիկյան «Պրավդայի» ծառայությունները Ռուսաստանի բազմազգ պրոլետարիատի առջև։ Լրագրի առաջին համարում խմբագրությունը ի լուր բոլոր բանվորների հանդիսավորապես հայտարարում է, որ «զարգացնել իր դասակարգային գիտակցությունը, հասկանալով վերաբերվել հասարակական կյանքի երևույթների և համախմբվել միասնական պրոլետարական ընտանիքի մեջ — ահա բանվորական շարժման խնդիրները և այդ խնդիրների մշտական բացատրումը հանդիսանում է բանվորական լրագիր «Պրավդայի» նպատակը»[2]։ Ղեկավարվելով այդ կարևորագույն սկզբունքներով, «Պրավդան» սիստեմատիկաբար լուսաբանում էր Ռուսաստանի ծայրամասերի՝ Լեհաստանի, Ֆինլանդիայի, Միջին Ասիայի, Մերձբալթյան երկրամասի, Ուկրաինայի և Անդրկովկասի պրոլետարիատի կյանքը, կազմակերպում և ուղղություն տալիս նրա պայքարին։ Նա մեծագույն չափով նպաստել է Ռուսաստանի բազմալեզու պրոլետարիատի համախմբմանը ու օգնել տեղական պարտիական կազմակերպություններին։ Դա «Պրավդայի» կարևորագույն ծառայություններից մեկն է ողջ երկրի բոլոր ազգերի բանվորների առջև։

1912—1914 թվականներին «Պրավդան» զանազան առիթներով բազմիցս անդրադարձել է հայ իրականության հետ կապված մի շարք կարևորագույն

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 18, էջ 379։
[2] „Правда", № 1, 1912.

հարցերի։ Սկզբից ևեթ նշենք, որ նպատակ դնելով լուսաբանել հայ իրականությունը, «Պրավդան» չի սահմանափակվել և բնականաբար չէր էլ կարող սահմանափակվել միայն Երևանի նահանգով։ Երևանի նահանգի հետ միասին նա նկատի է ունենում նաև Բաքվի, Թիֆլիսի և Ելիզավետպոլի նահանգները, այսինքն համարյա ողջ Անդրկովկասը. որի զանազան մասերում բնակվում էին բազմաթիվ հայեր։ Միայն այդպիսի մոտեցման դեպքում էր հնարավոր տալ հայ իրականության իսկական և լրիվ պատկերը։

Բոլշևիկյան «Պրավդային» պարբերաբար թղթակցում էին Ս. Շահումյանը, Ս. Կասյանը, Ա. Կարինյանը (Մ. Կ., Մ. Կ.-Ն), Ա. Մռավյանը (Ա. Նազարյան), Ա. Շահսուվարյանը, Ս. Հովսեփյանը (Ն. Սուրին, Ն. Ս-յան), Բ. Բորյանը (Ս. Բոգդանովիչ, Ս-ա), Ն. Դաղիվանյանը և ուրիշները։ Նրանց թղթակցություններում բարձրացվել են ինչպես Ռուսաստանի, այնպես էլ Անդրկովկասին ու Հայաստանին վերաբերող մի շարք կարևոր հարցեր։

«Պրավդան» բավականին լայն տարածում է գտել հայ մասսաների մեջ։ Նա կանոնավոր կերպով ստացվում էր Բաքվում և Թիֆլիսում, որտեղից բոլշևիկներն այն ուղարկում էին գավառները։

Ելիզավետպոլում «Պրավդայի» տարածման գործով զբաղվում էին Ա. Շահսուվարյանը և Արարատ Մռավյանը։ Վերջինս բացի դրանից կազմակերպում էր նաև հանգանակումներ հօգուտ «Պրավդայի» երկաթյա ֆոնդի։

1912 թ. Նոր-Բայազետ է գալիս Գ. Աթարբեկյանը։ Նա իր հետ բերում և տարածում է «Պրավդայի» մի շարք համարներ։ Արգահանում «Պրավդայի» տարածումը ժողովրդի և զինվորների մեջ ղեկավարում էր Արամ Վարդապետյանը։ Ընդհանրապես «Պրավդան» տարածվել է Ալեքսանդրոպոլում, Երևանում, Կարսում, Զանգեզուրում, Բորչալուի գավառում և այլ վայրերում։ Դա, ինչ խոսք, մեծ չափով նպաստում էր հայ բանվորների դասակարգային գիտակցության բարձրացմանը։ Բանվորները նրա էջերում գտնում էին իրենց հուզող բազմաթիվ հարցերի պատասխանը։ «Պրավդան» դառնում է հայ բանվորների սիրելի թերթը։

«Պրավդան» լուսաբանելով հայ իրականությունը, ամենից առաջ ընդգծում էր հայ պրոլետարիատի դասակարգային գիտակցության բարձրացման, նրա պայքարի կազմակերպման և հայ պրոլետարիատին Անդրկովկասի մյուս ազգերի բանվորների հետ միավորելու հարցերը։ Այս հարցերն առաջնակարգ նշանակություն էին ստանում սկսված ռևոլյուցիոն նոր վերելքի պայմաններում, վերելք, որն իր մեջ ներգրավեց նաև Կովկասը։ «Կովկասյան պրոլետարիատը» հոդվածում «Պրավդան» նշում էր, որ ամբողջ Ռուսաստանով մեկ տարածված գործադուլների հզոր ալիքը արձագանք գտավ նաև Կովկասում, և դասակարգային պայքարի ելան Կովկասի տարբեր ազգերի բանվորները։ «Վերջին տարիներս,— գրում էր «Պրավդան»,— նշանակալիորեն բարձրացել է Կովկասի պրոլետարիատի կուլտուրական մակարդակը, ամրացել է դասակարգային համերաշխությունը, պրոլետարական իդեոլոգիան թափանցել է բանվոր դասակարգի ամենահետամնաց շերտերը»[3]։ Սակայն, դրա հետ միասին «Պրավդան» իրավացիորեն, որպես բանվորական շարժման թույլ կողմը, նշում էր ղեկավարող կազմակերպությունների և հատկապես արհմիությունների անբավարար զարգացած լինելը։ Դեռ ավելին. Անդրկովկասի որոշ վայրերում

[3] „Северная Правда", № 25. 1913 г.

նրանք իսկական զոյություն չունեին. Հայտնի է, որ ռեակցիան լուրջ հարված հասցրեց արհմիութենական շարժմանը։ Ռեակցիայի տարիներին արհմիությունները փակվեցին, իսկ նրա ակտիվ գործիչներից շատերը ձերբակալվեցին։ Հայ պրոլետարիատի արհմիութենական շարժմանը մեծ չափով վնասել են նաև նացիոնալիստական պարտիաները։ Դաշնակները, սոցիալիստները և այլն, ձգտում էին ստեղծել ազգային արհմիություններ՝ հետապնդելով հայ բանվորներին Անդրկովկասյան պրոլետարիատից անջատելու նպատակը։ «Պրավդան» այդ սկզբունքը համարեց վնասակար։ Այդ հարցի առթիվ հանդես գալով «Պրավդայում», Ա. Կարինյանը նշում էր, որ հայ նացիոնալիստները՝ դաշնակները և սոցիալիստները, «ազգային արհմիություններ ստեղծելով, ցանկանում էին ինչ գնով էլ լինի անջատել հայ պրոլետարիատին Բաքվի ողջ պրոլետարիատից»[4]։

Սակայն ռեակցիայի տարիները հայ բանվորներին ցույց տվին, որ դաշնակների, սոցիալիստների և մյուս նացիոնալիստների սոցիալիզմը կեղծ է, որ նրանք հեռու են կանգնած բանվորական շահերի պաշտպանությունից։ Հայ բանվորներն ավելի ու ավելի էին համոզվում, որ հայ նացիոնալիստների միակ մտահոգության առարկան հայ բուրժուազիայի շահերի պաշտպանումն է։ Դա շատ կարևոր եզրակացություն էր, որին հանգեց հայ պրոլետարիատը։ Դրա անմիջական հետևանքը եղավ նացիոնալիստական պարտիաների հեղինակության խիստ անկումը հայ բանվորների շրջանում։ Սկսված ռևոլյուցիոն նոր վերելքի պայմաններում հայ բանվորները համընթաց քայլում են Անդրկովկասի պրոլետարիատի հետ։ Դրա վառ վկայություններից մեկն էլ այն էր, որ հայ բանվորները մտնում էին ինտերնացիոնալիզմի սկզբունքներով կառուցված արհմիությունների մեջ։ «Առաջավոր հայ բանվորները լավ գիտեն, որ նացիոնալիզմին արված ամեն մի դիջում վնասակար ու ռեակցիոն է։ Այդ պատճառով էլ նրանք այժմ ավելի շատ և ավելի շուտ մտնում են հատկապես այն միությունների մեջ, որոնք միավորում են տվյալ արդյունաբերական ճյուղի բոլոր բանվորներին։ Եվ եթե այժմ նույնիսկ կրկին փորձեն արհմիություններ ստեղծել ըստ ազգային հատկանիշի — այնտեղ ոչ ոք չի գնա»[5]։ Դա վկայում է այն մասին, որ հայ պրոլետարիատի դասակարգային գիտակցությունը զգալիորեն բարձրացել էր, որ նա ըմբռնում էր իր դասակարգային շահերը։

«Պրավդան» իր էջերում նշանակալից տեղ է հատկացրել Անդրկովկասի մյուս ազգերի բանվորների հետ հայ բանվորների համերաշխ ելույթների ցուցադրմանը, հայ պրոլետարիատին ինտերնացիոնալիզմի ոգով դաստիարակելուն։ Նա հատկապես մեծ ուշադրություն է դարձնում Բաքվի 1914 թ. գործադուլի յուսաբանմանը, որին նվիրված են բազմաթիվ հոդվածներ։ Այդ բոլոր հոդվածներում, որպես կանոն, նշվում է Բաքվի բազմազգ պրոլետարիատի համերաշխ ելույթը։

«Պրավդան» նշում էր՝ դեռ չէր եղել, որ ռուս, հայ, պարսիկ, ադրբեջանցի և այլ բանվորներ, բոլորը միասին, վերանալով իրենց մասնավոր կարիքներից, այդպես համերաշխորեն հանդես գային, պաշտպանեին իրենց ընդհանուր շահերը։

Վերլուծելով Բաքվի գործադուլը, Ա. Կարինյանը «Բաքվի գործադուլը և

---

[4] „Трудовая Правда", № 32, [illegible]

[5] Նույն տեղում։

ազգային հարցը» հոդվածում, նրա ամենանշանակալից կողմը համարում էր գործադուլի ինտերնացիոնալիստական բնույթը. «Գործադուլային շարժումը Բաքվի նավթարդյունաբերական շրջանում աչքի է ընկնում մեկ բնորոշ առանձնահատկությամբ։ Դա ոչ միայն ռուս բանվորների շարժումն է, այլ ընդհանրապես Բաքվի ողջ պրոլետարիատինը։ Ռուսների հետ միասին գործադուլ են անում թաթարները, հայերը, լեզգիները...»[6]։ Հիրավի, Բաքվի, 50 հազարանոց պրոլետարիատը մեծագույն համերաշխությամբ ոտքի էր կանգնել իր պահանջները բավարարելու համար։ «Պրավդան» նշում էր, որ Բաքվի գործադուլն իրենից ներկայացնում էր ինտերնացիոնալիստական ելույթի մի զմայլելի պատկեր։ Եվ պատահական չէ, որ «Պրավդան» գտնում էր, թե Բաքվի գործադուլն «ունի այն նշանակությունը, որ վճռականորեն բոլոր հայ բանվորներից վերջնականապես դուրս կմղի նացիոնալիստական տրամադրությունը, նրանց մեջ զարգացնելով ինտերնացիոնալիզմի ոգին — բանվորական շարժման իսկական ոգին»[7]։ Բաքվի պրոլետարիատի պայքարը կազմակերպելու և նրա հաջողությանը նպաստելու համար «Трудовая правда»-ն որոշում է իրեն կից հրատարակել «Кавказский листок», որը պետք է ունենար ադրբեջանական և հայկական բաժիններ[8]։ Սակայն, այդպես էլ չհաջողվեց իրագործել այդ հրաշալի պլանը։ Պետք է ենթադրել, որ դրան խանգարեցին նյութական անհրաժեշտ միջոցների բացակայությունը և վրա հասած համաշխարհային պատերազմը, որը վերջ տվեց գործադուլին։

Միայն սրանով չի նշանակալից Բաքվի գործադուլը։ «Պրավդան» առանձնացնում է այդ գործադուլի մյուս կարևոր կողմը՝ հայ պրոլետարիատի դասակարգային գիտակցության բարձրացումը։ Դրա կոնկրետ արտահայտությունն այն էր, որ հայ բանվորները հրաժարվում են պարգևագրամների, «փեշքեշների» պահանջից և առաջարկում աշխատավարձի բարձրացման պահանջ։ Դա հայ բանվորի գիտակցության բարձրացման ուղղությամբ մի խոշոր քայլ էր դեպի առաջ։ «Փեշքեշների» պահանջը երկար ժամանակ առաջադրում էին ադրբեջանցի, պարսիկ և հայ բանվորները։ «Բանվորների մասսան, մեծ մասամբ Պարսկաստանից կամ թե հայկական խուլ գյուղերից եկածները, հեռու էր պարգևագրամներ ստանալու սննդատակահարմարությունը հասկանալուց»[9]։ Պարգևագրամները, ինչպես նշել է Ս. Շահումյանը, վերջին հաշվով ծառայում էին տերերի շահերին։ Նրանք բանվորների մեջ կարող էին շահագրգռվածություն առաջացնել, որ կապիտալիստի գործերը լավ ընթանան։ Դա բանվորներին կապիտալիստների կողմը գրավելու և բանվորների ու կապիտալիստների միջև շահերի ընդհանրության կեղծ, նացիոնալիստական «թեորիանները» հիմնավորելու մի բաղարկված ձև էր։ Այդ պատճառով էլ բոլշևիկները սկզբից ևեթ դեմ արտահայտվեցին «փեշքեշներին»։ Նրանք նշում էին, որ իսկական պրոլետարական պահանջ կարող է լինել ոչ թե «փեշքեշը», այլ աշխատավարձի բարձրացումը։ Բոլշևիկներն այդ ուղղությամբ հասան մեծ հաջողությունների։ Նրանք հասկանալի դարձրին, «փեշքեշների» վնասակար լինելը բանվորական շարժման համար։ «Եվ այժմ ահա այդ մասսան (պարսիկները և հայերը — Ն. Հ.) վերջապես հասավ այն գիտակցության, որ պարգևագրամնե-

[6] Նույն տեղում։
[7] Նույն տեղում։
[8] Տես Նույն տեղում, № 10, 1914.
[9] Նույն տեղում, № 3, 1914.

լը դրանք վաստակած բանվորական արժեքների մասն են և նա իրավունք ունի այն ստանալու։ Եվ պարգևադրամները վերացնելու պահանջի հետ միասին այդ մասսան առաջադրել է աշխատավարձը բարձրացնելու պահանջը»[10]։ Դա արդեն պրոլետարական քաղաքականության հաղթանակն էր հայ բանվորների շրջանում։

Կովկասում, ինչպես նշել է Ստ. Շահումյանը, ռևոլյուցիայի ոգերիմ թշնամին միշտ էլ եղել է նացիոնալիզմը։ Հայ, վրացի և ադրբեջանցի նացիոնալիստները միշտ էլ աշխատել են բորբոքել ազգային կրքերը, ազգային կռվի կոչ են արել, որպեսզի դրանով սեպարատիզմ մտցնեն Անդրկովկասի պրոլետարիատի շարքերը։ Հասկանալի է, որ այդ կարևոր և ցավոտ հարցը «Պրավդան» չէր կարող մոռացության մատնել։ Նա սիստեմատիկաբար մերկացնում է Անդրկովկասյան նացիոնալիստական պարտիաներին, այդ թվում և դաշնակներին ու սպեցիֆիկներին և Կովկասի բազմազգ պրոլետարիատին համերաշխության կոչ անում։ «Պրավդան» նշում էր, որ դաշնակցությունը բուրժուա-նացիոնալիստական պարտիա է, որը փորձում է հայ բանվորներին անջատել մյուս ազգերի բանվորներից և նրանց միավորել հայ կապիտալիստների հետ։ Դաշնակցությունը հայ բուրժուազիայի շահերի պաշտպանն էր։ «Պրավդան» գրում էր. «Հայ կապիտալիստների չափազանց խանդոտ պաշտպանությունը, որը հանդես է բերում «դաշնակցությունը», ցույց տվեց, որ այդ պարտիան ըստ էության բուրժուական է»[11]։ Այդ պարտիայի նացիոնալիստական և բուրժուական բնույթը չէր կարող քողարկել և ոչ մի «սոցիալիստական» քողամիզ։ Մերկացնելով դաշնակցության կեղծ սոցիալիզմը, «Պրավդան» գրում էր. «Մի շարք տարիների ընթացքում կովկասյան մարքսիստները պայքարել են այսպես կոչված «դաշնակցություն» պարտիայի և բուրժուական նացիոնալիստների կովկասյան մյուս խմբավորումների դեմ, որոնք իրենց անվանում են սոցիալիստներ»[12]։ Այստեղ «Պրավդան ի նկատի ունի նաև սպեցիֆիկներին։ Վերևում արդեն նշվեց նրանց վնասակար դերը արհմիութենական շարժման մեջ և ընդհանրապես պրոլետարիատի դասակարգային կազմակերպությունների հարցում։ Նրանք փորձում էին հանդես գալ որպես հայ պրոլետարիատի միակ ներկայացուցիչներ և պաշտպանում էին բանվորական կազմակերպություններն ըստ ազգային հատկանիշի կառուցելու սկզբունքը։ «Պրավդան» հայ սպեցիֆիկներին իրավացիորեն դնում է հրեական բունդի կողքին՝ երկուսի համար էլ ընդհանուր համարելով այն, որ նրանք խոսքով իրենց հայտարարում են ինտերնացիոնալիզմի կողմնակիցներ, սակայն օբյեկտիվորեն, իրենց գործունեությամբ նրանք տիպիկ նացիոնալիստներ են, որոնք տրոհում են պրոլետարիատի միասնական, դասակարգային շարժումը։ Բունդականները և սպեցիֆիկները «հայտարարում էին, որ հատկապես իրենց ազգային ծրագիրն է պարտադրում պաշտպանելու պրոլետարիատին ըստ ազգությունների կազմակերպելը, «միակ ներկայացուցչությունը» ազգային տոները և փաստորեն—բանվորական ուժերի մասնատումը, շարժման տրոհումը, նրա դասակարգային էության նենգափոխումը «ազգային տոներով»[13]։ Այստեղ, ինչպես տեսնում ենք, «Պրավդան» լիովին բացահայտում է սպեցիֆիզմի նացիոնալիստական

[10] Նույն տեղում։
[11] Նույն տեղում, № 32, 1914.
[12] „Пролетарская правда", № 9, 1914.
[13] Նույն տեղում, № 11, 1914.

էությունը և դրանով ցույց տալիս նրա ողջ վնասակարությունը պրոլետարական շարժման համար։ Նա միաժամանակ հույս էր հայտնում, որ բունդիզմը և սոցեցիֆիզմը հաջողություն չեն ունենա բանվորական շարժման մեջ։ Դրա գրավականն էր հանդիսանում այն, որ հայ բանվորները Կովկասի մյուս ազգերի բանվորների հետ միասին պաշտպանում էին պրոլետարիատի կազմակերպությունների կառուցման ինտերնացիոնալ սկզբունքը։ Այդ կապակցությամբ «Պրավդան» «Բանվորական համերաշխություն» հոդվածում գրում էր. «Կովկասում 15 տարվա ընթացքում բոլոր ազգերի մարքսիստ բանվորները — և վրացիները, և՛ հայերը, և՛ թաթարները, և ռուսները—կիրառում են կազմակերպման այդ (ինտերնացիոնալիստական — Ն. Հ.) մեթոդը»[14]։ «Պրավդան» իրավացիորեն գտնում էր, որ միայն կազմակերպման այդ ձևն է, որ ծառայում է տարբեր ազգերի համախմբման գործին և միաժամանակ պատնեշ հանդիսանում՝ ընդդեմ բանվորական միջավայրում ղանազան նացիոնալիստական թեորիաների տարածման։

Այս բոլորի հետ միասին «Պրավդան» որոշակի ուշադրություն է դարձրել հայ բուրժուա-նացիոնալիստների ազգային ծրագրերի և հայացքների մերկացմանը։ Նա ճիշտ է նկատում, որ մի կողմից բոլշևիկների, իսկ մյուս կողմից հայ նացիոնալիստների միջև «վեճը գլխավորապես պտտվել է ազգային հարցի շուրջը։ Կովկասյան մարքսիստները պաշտպանում էին ինտերնացիոնալիզմի սկզբունքները, վրացի, հայ, թաթար, ռուս և այլ բանվորների միավորումը»[15], մինչդեռ նացիոնալիստները հանդես էին գալիս ազգերի սահմանազատման, ազգային-կուլտուրական հիմնարկների ստեղծման, դպրոցական գործերի անջատման և այլ վնասակար պահանջներով։ Այս շրջանում հատկապես լայն տարածում ստացավ կուլտուր-ազգային ավտոնոմիայի պահանջը, որը, մյուս ազգերի նացիոնալիստների հետ միասին, առաջադրում էին նաև հայ նացիոնալիստները։ «Պրավդան» բազմաթիվ հոդվածներ է նվիրել կուլտուր-ազգային ավտոնոմիայի նացիոնալիստական էության բացահայտմանը։ Նա ցույց էր տալիս, որ կուլտուր-ազգային ավտոնոմիան նուրբ նացիոնալիզմ է։ Այն ծառայում է բանվորների սահմանազատմանը ըստ ազգային հատկանիշի, բորբոքում է ազգային կրքերը, խորացնում ազգային ատելությունը, ուստի և ծառայում է տիրապետող դասակարգի շահերին։ «Պրավդայում» տպագրվել են Վ. Ի. Լենինի մի շարք հոդվածները, նվիրված ազգային հարցին, որտեղ նա մերկացնելով ամեն դույնի նացիոնալիստների. միաժամանակ մշակում և հիմնավորում է ազգային հարցի մարքսիստական թեորիան։ 1914 թ. փետրվարի 5-ին «Պրավդայում» լույս տեսավ Վ. Ի. Լենինի «Ազգային ծրագրի պատմության շուրջը Ավստրիայում և Ռուսաստանում» հոդվածը, որտեղ նա ցույց էր տալիս կուլտուր-ազգային ավտոնոմիայի վնասակար լինելը պրոլետարիատի համար և նշում, որ այդ նացիոնալիստական թեորիան հրեական բունդի ու «Սերպ»-ի, բելոռուսական գրոմադայի, վրացական սոցիալիստ-ֆեդերալիստների հետ միասին պաշտպանում է նաև դաշնակցությունը։ Վ. Ի. Լենինը նշում էր, որ կուլտուր-ազգային ավտոնոմիան անջատում է տարբեր ազգերի բանվորներին և միացնում մեկ ազգի պրոլետարիատին ու բուրժուազիային, ուստի պայքարելով նրա դեմ, պետք է հղտենք, որ «բոլոր ազգերի բանվորներին հա-

[14] „Правда труда", № 12, 1913.
[15] „Пролетарская правда", № 9. 1914.

մախմբենք միևնույն պայքարում՝ ընդդեմ ամեն մի նացիոնալիզմի, միևնույն պայքարում՝ հանուն իսկապես դեմոկրատական ընդհանուր դպրոցի և հանուն քաղաքական ազատության ընդհանրապես»[16]։

Այս բոլորը, անշուշտ, մեծ օգնություն էր հանդիսանում Հայաստանի բոլշևիկներին այն պայքարում, որ նրանք մղում էին հայ բուրժուա-նացիոնալիստների դեմ՝ հանուն պրոլետարական ինտերնացիոնալիզմի վեհ գաղափարների հաղթանակի հայ իրականության մեջ։

Մեր կողմից քննարկվող ժամանակաշրջանում ինչպես ողջ Ռուսաստանի, այնպես էլ Անդրկովկասի բոլշևիկների կարևոր խնդիրներից մեկն է եղել պայքարը մենշևիկ-լիկվիդատորների դեմ։ Այդ պայքարը նույնպես իր արտացոլումն է գտել «Պրավդայի» էջերում։ Ս. Կասյանը նշում է, որ 1912 թ. իրենց հաջողվեց «կապ հաստատել պրովինցիայի հետ, ուժեղացնել պայքարը ընդդեմ մենշևիկ-լիկվիդատորների, որի մասին ես գրել եմ այն ժամանակվա «Պրավդայում»[17]։ 1913 թ. հոկտեմբերի 29-ին «Պրավդայում» «Կովկասյան մարքսիստները» վերնագրով լույս տեսավ մի նամակ, որը ստորագրել էին 11 հոգի, այդ թվում Ա. Մռավյանը, Ս. Հովսեփյանը և ուրիշներ։ Նրանք Կովկասի ողջ պրոլետարիատի՝ հայ, վրացի, ադրբեջանցի, ռուս և այլն անունից հայտնում են, որ պաշտպանում են 4-րդ Պետական դումայում բոլշևիկյան 6 դեպուտատների դիրքը, որոնք չափազանց դժվարին պայմաններում վարում էին հետևողական պրոլետարական քաղաքականություն և դատապարտում մենշևիկյան «յոթնյակի» լիկվիդատորական վարքագիծը։ Կովկասյան մարքսիստները գրում էին. «Մենք բոլոր հիմքերն ունենք հայտարարելու, որ լիկվիդատորական լոզունգները կովկասյան բանվորների և մասնավորապես Բաքվի բանվորների շրջանում, բոլորովին համակրանք չեն վայելում»[18]։ Դրա հետ միաժամանակ կովկասյան մարքսիստները մերկացնում են լիկվիդատորական «յոթնյակին» Պետական դումայում կուլտուր-ազգային ավտոնոմիայի պահանջը մտցնելու համար։ Նրանք մատնանշում էին, որ այդպիսի պահանջ առաջադրելու համար «յոթնյակը» և նրա մեջ մտնող կովկասյան դեպուտատները չեն ստացել նախապ կովկասյան բանվորական կազմակերպություններից և նրանք իրավունք չունեին այդ հակամարքսիստական պահանջն առաջադրելու։ Առաջադրելով կուլտուր-ազգային ավտոնոմիայի պահանջը «յոթնյակի» կովկասյան դեպուտատները դրանով իսկ, ինչպես նշում էր «Պրավդան», քաղաքական քաղաքավարության տուրք են տվել հայ նացիոնալիստ դաշնակցականներին, որոնք 4-րդ Պետական դումայի ընտրությունների ժամանակ իրենց ձայնը տվել էին մենշևիկ-լիկվիդատոր Զևեհաձեին։

Անդրկովկասի բոլշևիկները բացահայտելով լիկվիդատորության վտանգը բանվորական շարժման համար, Կովկասի բոլոր ազգերի բանվորներին կոչ էին անում ուժեղացնելու իրենց պայքարը ընդդեմ լիկվիդատորների՝ հանուն ռևոլյուցիոն մարքսիստական ծրագրի։ «Կոչ ենք անում ձեզ ընկեր կովկասյան բանվորներ, հետևելու Պետերբուրգի պրոլետարիատի օրինակին և իր վճռական խոսքն ասել սոցիալ-դեմոկրատական ֆրակցիայի լիկվիդատորություն անող յոթ անդամների առթիվ, ասել, որ դուք թույլ չեք տա այդպես անպատասխանատու կերպով ոտնակոխ անել մեր հին մարտական ծրագիրը, որի համար

[16] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 19, էջ 274։
[17] ЦПА ИМЛ. ф. 124, оп 2, ед. хр. 804, л. 7.
[18] „За правду", № 22, 1913.

մղած պայքարում դուք տվել եք այդքան շատ զոհեր»[19]։ «Պրավդան» միաժամանակ հավաստիացնում էր բոլշևիկյան «վեցյակին», որ ինչպես միշտ, այնպես էլ այս անգամ Ռուսաստանի ողջ գիտակից պրոլետարիատը կաջակցի նրանց այն պայքարում, որ նրանք մղում են Ռուսաստանի բազմամարդ պրոլետարիատի շահերի պաշտպանության համար։

1912—1913 թթ. «Պրավդան» լայն պայքար ծավալեց բանվորներին դժբախտ դեպքերից և հիվանդություններից ապահովագրող օրենքը բոլոր ձեռնարկությունների վրա տարածելու համար։ Բանը նրանումն էր, որ գոյություն ունեցող օրենքը ուներ մեծ թերություններ և սահմանափակումներ։ Այդ սահմանափակումներից մեկն էլ այն էր, որ նա չէր տարածվում փոքր ձեռնարկությունների բանվորների վրա։ «Պրավդան» ցույց էր տալիս, որ դժբախտ դեպքեր տեղի են ունենում ոչ միայն խոշոր ձեռնարկություններում, այլ նաև մանրերում, դեռ ավելին. վերջիններում ավելի շատ, որովհետև տեխնիկական անվտանգությունն այնտեղ ավելի վատթար վիճակում էր գտնվում։ Իբրև օրինակներ նա հաճախակի Ռուսաստանի զանազան ծայրամասերից տպում էր հաղորդագրումներ վթարների և այլ դժբախտ պատահարների մասին։ «Պրավդայում» այդպիսի հաղորդումներ տպվում էին նաև Հայաստանից։ 1913 թ. հունվարի 16-ի համարում տպագրված «Կատաստրոֆա գործարանում» վերնագրով հաղորդման մեջ նշվում էր, որ եղբայր Կունդուրովներին պատկանող Ղաթարի պղնձաձուլական գործարանում դինամիտի պայթյունի հետևանքով սպանվել է վեց մարդ և հիմնահատակ ավերվել՝ երկհարկանի շենքը[20]։ «Պրավդան» բացատրում էր, որ ապահովագրության մասին օրենքը տարածվում է խոշոր ձեռնարկությունների բանվորների վրա այն պատճառով, որովհետև նրանք ավելի կազմակերպված են և կապիտալը հարկադրված դիջում է այդ ուժի առջև։ Թերթը կոչ էր անում մանր ձեռնարկությունների բանվորներին կազմակերպվել և համախմբվել, որովհետև միայն այդ ուղիով կարելի էր շատ թե քիչ բարելավել բանվորների տնտեսական պայմանները։

«Պրավդայի» համառուսական այդ տրիբունայի, գործունեության դրական ու կարևոր կողմերից մեկը եղել է այն, որ նա չափազանց ուշադիր և հոգատար վերաբերմունք ուներ ազգային լեզուներով տպվող մարքսիստական հրատարակությունների հանդեպ։ Նա այդ հրատարակությունների մասին սիստեմատիկաբար տպում էր հաղորդումներ, համառոտակի շարադրելով նրանց բովանդակությունը։ Դրանով տեղական բոլշևիկների աշխատանքի այդ կողմի մասին տեղյակ էր դառնում ողջ պրոլետարական Ռուսաստանը և բացի այդ, դա ոգևորում, ուժ ու եռանդ էր ներշնչում հրատարակման գործը կազմակերպողներին։

«Պրավդան» այդպիսի հաղորդումներ է տպել «Մեր խոսքի» և «բանվորական նոր գրադարանի» մասին։

Ինչպես հայտնի է, 1914 թ. հունվարին Թբիլիսիում հաջողվեց Ս. Կասյանի խմբագրությամբ լույս ընծայել «Մեր խոսքը», որի հետ մեծ հույսեր էին կապում բոլշևիկները։ 1914 թ. փետրվարի 6-ին «Մեր խոսքի» մասին «Պրավդայում» լույս տեսավ Ա. Մռավյանի հաղորդագրությունը, որտեղ նշվում էր որ ամսագրի առաջին համարը կազմված է հետաքրքիր և բազմակողմանի։

[19] Նույն տեղում։
[20] „Правда", № 12, 1913.

Այնուհետև շարադրվում է կարևոր հոդվածների համառոտ բովանդակությունը։ Վերջում «Պրավդան» գրում է. «Ցանկանք հայ բանվորների երիտասարդ օրգանին հաջողություն և երկարատև գոյություն բանվորական մամուլի համար դժվար ժամանակներում»[21]։ Սակայն «Մեր խոսքը» երկար կյանք չունեցավ։ Նրա առաջին և միակ համարը լոնդոնում լույս տեսավ, իսկ հրատարակիչները դատի տրվեցին։

1914 թ. պրոլետարական դրոշ Հ. Հակոբյանին հաջողվում է իր իսկ հիմնած տպարանական բանվորների խմբակի օգնությամբ հրատարակել ամենամսյա գրքույկներ՝ «Կարմիր մեխակներ», «Բանվորի ալբոմ» և այլն, որոնց շուրջը առաջին անգամ կոլեկտիվ կերպով համախմբվում են հայ պրոլետար գրողները։ Հ. Հակոբյանի այս նախաձեռնությունը ողջունեցին «Պրավդան», Ս. Շահումյանը և Ա. Լունաչարսկին։ Վերջինս, ինչպես նշում է Հ. Հակոբյանը Փարիզից, «Կարմիր մեխակների» ֆոնդը ամրապնդելու համար, ձրի հոդված ուղարկեց, «Արվեստը կյանքի համար» վերնագրով[22]։ «Պրավդան», նշում էր, որ առանձնապես հաջող են կազմված «Կարմիր մեխակները»։ Նա հեղինակների մեջ հատկապես առանձնացնում էր «վշտի պոետ» Հ. Հակոբյանի ստեղծագործությունը, որտեղ տրված է գործարանային կյանքի ճշմարիտ պատկերը։ Իրավացիորեն խոսքեր կան Ա. Վարդանյանի «Ուրվականներ» ստեղծագործության մասին, որտեղ հեղինակն ընդհանուր գծերով տվել է «ուժեղների» և բողոքողների պորտրեները։ Ժողովածուում տպագրված բոլոր գործերն էլ, չնայած իրենց թերություններին, գնահատվում են որպես անկեղծ և ճշմարտացիորեն գրված ստեղծագործություններ։ «Պրավդան» հույս էր հայտնում, որ «նոր գրադարանի» հրատարակությունները, անկասկած, հայ բանվորների մոտ հաջողություն կունենան։ Առաջավոր հայ բանվորները պետք է ուժերը ներածին չափ օգնեն տպագրական բանվորների նախաձեռնությանը և դրանով իսկ նպաստեն պրոլետարական լայն հրատարակչության ստեղծմանը»[23]։ Դժբախտաբար այդ գեղեցիկ ձեռնարկումն ընդհատվեց սկսված համաշխարհային իմպերիալիստական պատերազմի պատճառով։

1912—1914 թթ. դարձյալ սրվեց «Հայկական հարցը»։ Հենց այս շրջանում էր՝ 1913 թ., որ Արևմտյան Հայաստանի վերաբերյալ ռեֆորմների իր նախագծով հանդես եկավ ցարական Ռուսաստանը, որը սակայն մերժեցին Թուրքիան և Արևմտյան տերությունները։ Ընդհանրապես «Հայկական հարցը» կրկին դառնում է միջազգային դիպլոմատիայի հետաքրքրող հարցերից մեկը։ Սակայն այդ հետաքրքրության դրդապատճառը, ինչպես նշում էր «Պրավդան», ոչ թե մեծ տերությունների ալտրուիստական, մարդասիրական մղումն էր դեպի հայ ժողովուրդը և նրա ծանր վիճակը, այլ Փոքր Ասիայի, Թուրքական Հայաստանի քաղաքական և տնտեսական նշանակությունը[24]։

Բոլշևիկյան «Պրավդան», սիստեմատիկաբար և բազմակողմանիորեն լուսաբանում էր հայ ժողովրդին այնքան հուզող և նրան այնքան դժբախտություններ բերած «Հայկական հարցը»։ Նրա էջերում տպագրվել են «Փոքր Ասիան և հայկական հարցը» (27 հուլիսի 1913 թ.), «Թուրքիայում» (17 օգոստոսի 1912 թ.), «Անհետացող Հայաստանը» (14 հունիսի 1913 թ.), «Հայկական հար-

[21] „Путь правды", № 14, 1914.
[22] Տես ЦПА, ИМЛ, ф. 124, оп 1, ед хр. 24, л. 10.
[23] „Путь правды", № 50, 1914.
[24] Նույն տեղում, № 10, 1914.

ցի շուրջը» փետրվարի 1914 թ.) և այլ հոդվածներ ու հաղորդումներ։ Այդ հոդվածներում փաստորեն շարադրված է բոլշևիկյան պարտիայի դիրքը այդ վերին աստիճանի կնճռոտ հարցի վերաբերյալ։ Քննարկելով «հայկական հարցը», «Պրավդան» նախ և առաջ մերկացնում է միջազգային իմպերիալիզմի, կոնկրետ կերպով գերմանական, անգլիական, ֆրանսիական և ռուսական իմպերիալիզմի քաղաքականությունը, որոնք իրենց քաղաքական և տնտեսական նպատակների համար. Թուրքիայի վրա ճնշում գործադրելու և նրանից զիջումներ կորզելու համար ժամանակ առ ժամանակ վեր էին բարձրացնում «հայկական հարցը»։ «Փոքր Ասիայի, իսկ դա նշանակում է և Հայաստանի մասին, գերմանական կապիտալը վաղուց է երազում»[25]։ Ինչպես իրավացիորեն նշում էր «Պրավդան», նրա մասին երազում էր նաև անգլիական, ֆրանսիական և ռուսական կապիտալը, որոնք ամեն գնով ձգտում էին ձեռք բերել այդ հազվադյուտ «հյութեղ կտորը»։ 1913 թ. մայիսի 27-ին Թիֆլիսում «Անհետացող Հայաստանը» վերնագրով դասախոսություն է կարդում «Биржевые Ведомости»-ի աշխատակից Օլգենինը։ Նա առանց քաշվելու հայտարարում է, թե «հայկական հարցը միաժամանակ և ռուսական հարց է»։ Մերկացնելով ռուսական ֆինանսական կապիտալի շահերի պաշտպանի այդ ելույթը, «Պրավդան» գրում էր, որ փաստորեն պ. Օլգենինը կոչ է անում ցարական կառավարությանը նվաճողական քաղաքականություն վարել փոքր Ասիայում, որն, անշուշտ, կհանգեցնի նոր ավանտյուրաների և նոր զոհեր կպահանջի տանջված հայ ժողովրդից։ Ուստի «Պրավդան» զգուշացնում էր, որ «նոր ավանտյուրաները, նոր զավթումները. նոր բարդությունները մեր ժամանակվա թանձր միջազգային մթնոլորտում դեմոկրատական Ռուսաստանի, այդ թվում և դեմոկրատական Հայաստանի օգտին չեն»[26]։ Միջազգային իմպերիալիզմի մեքենայություններից և գործարքներից տուժողը լինում էր հայ աշխատավոր ժողովուրդը, որը նրանց գործարքների համար վարձահատույց էր լինում իր արյունով։

Դրա հետ միաժամանակ «Պրավդան» մերկացնում էր թուրք բարբարոսներին և նրանց ձեռքին գործիք դարձած քուրդ ավազակներին, որոնք դժոխային պայմաններ էին ստեղծել հայ աշխատավոր ժողովրդի համար։ Հայը Թուրքիայում բոլոր տեսակետներից էլ իրավազուրկ էր։ Այդ կապակցությամբ «Պրավդան» գրում էր. բոլորին էլ հայտնի է «թուրքահայերի ծանր, անտանելի վիճակը, նրանց վերին աստիճանի աղքատությունը, հայ գյուղական բնակչության պրոգրեսիվորեն աճող պաուպերիզացիան, մասնավոր սեփականության նրա երևակայական իրավունքը ինչպես հողի, այնպես էլ շարժական գույքի նկատմամբ, նրա իրավական—վարչական անպաշտպանությունը և այլն և այլն»[27]։ Հայ ժողովրդի գոյության համար Թուրքիայում ստեղծվել էր սպառնալից վիճակ, մանավանդ, որ թուրքերը գիտակցաբար իրենց քաղաքականության անկյունաքար էին դարձրել հայ ժողովրդի բնաջնջումը։ Եվ «Պրավդան» տագնապ արտահայտելով թուրքահայ ժողովրդի բախտի նկատմամբ, հարցնում էր. «Ի՞նչ կլինի ժողովրդի հետ, որը միակ կուլտուրտրեգերն է Առաջավոր Ասիայում»[28]։

Պետք է նշել, որ այդ ժողովրդի բախտը քիչ էր հետաքրքրում նաև հայ

[25] „Рабочая правда", № 13, 1913.
[26] „Правда", № 135, 1913.
[27] Նույն տեղում։
[28] „Рабочая правда", 13, 1913.

բուրժուազիային և հայ նացիոնալիստներին, չնայած նրանց բազմաթիվ «ազդասիրական» դեկլարացիաներին։ Նրանց ազգային քաղաքականությունը հեռու էր Թուրքահայ ժողովրդի շահերը արտահայտելուց։ Հայ բուրժուազիային, ինչպես և ռուսական իմպերիալիզմին հետաքրքրողը, նշում էր «Պրավդան», եղել է նոր շուկա ձեռք բերելու հարցը։ Այդ պատճառով էլ հայ բուրժուազիան համակրանքով էր վերաբերում Թուրքահայաստանը գրավելու ռուսական դիվանագիտության պլաններին, հասկանալով, որ նրանց իրականացման դեպքում կովկասահայ բուրժուազիան կշահի։

«Պրավդան» բացահայտել է «հայկական հարցում» հայ բուրժուա-նացիոնալիստների քաղաքականության նաև մյուս կողմը։ Հայ բուրժուա-նացիոնալիստները «հայկական հարցը» համարել են «արտադասակարգային», «համազգային» դատ, որին պետք է ենթարկվեին հայերի, այդ թվում և բանվորների մյուս բոլոր խնդիրները։ Դա նրանց ձեռքին մի գործիք է եղել նացիոնալիզմի կրակը անմար պահելու և հայ պրոլետարիատին դասակարգային պայքարից հեռու պահելու համար։ Ինչպես նշում էր «Պրավդան», «Թուրքահայերի հարցը հայ բուրժուազիան ուզում է դարձնել մի շանթարգել ընդդեմ գիտակցական կյանքի արթնացող հայ բանվորի»[29]։

Մերկացնելով և՛ միջազգային իմպերիալիզմի, և՛ հայ բուրժուազիայի ու նրա նացիոնալիստական սպասարկուների քաղաքականությունը, որոնք միշտ փորձում էին հանդես գալ Թուրքահայ ժողովրդի անունից, «Պրավդան» նշում էր, որ նրանց ընտրած ուղիով չի կարելի հասնել «Հայկական հարցի» լուծմանը, մանավանդ, որ այդ քաղաքականության մեջ բոլորովին չի լսվում Թուրքահայի ձայնը, նրա շահերը բոլորովին անտեսված են։ «Թվում էր թե,—գրում էր «Պրավդան», քանի որ հարցը վերաբերում է Թուրքահայերին՝ հենց նրանց էլ պետք է պատկանի վճռական խոսքը։ Սակայն հայ բուրժուազիայի գաղափարախոսները նշված ուղղությամբ չեն գործում։ Նրանց համար ցանկալի է ծածուկ միջոցներով օժանդակել ռուսական դիվանագիտության մտադրություններին ու պլաններին, քանի որ նրանք արդեն շատ լավ գիտեն, որ Թուրքահայերի համար ո՛չ ցանկալի և ո՛չ էլ փրկարար կլինի կանգնել գորեմիկինյան նացիոնալիստական քաղաքականության պաշտպանության տակ»[30]։ Ահա թե ինչու հայ նացիոնալիստները, չնայած «հայկական հարցի» շուրջը բարձրացրած իրենց աղմուկին, վախենում էին հարցնել և իմանալ Թուրքահայերի կարծիքը, ցանկությունները։ Դրա փոխարեն նրանք նախընտրում էին այդ հարցը լուծել կուլտուրաներում, մասնավոր խորհրդակցություններում և այլն։ «Պրավդան» արտահայտելով բոլշևիկների տեսակետը, Թուրքահայ հարցի լուծումը վերջին հաշվով, կապում էր Թուրքիայի ներքին բարեփոխումների հետ, հին, այսինքն բռնակալական կարգերի լրիվ վերացման և դեմոկրատական կարգերի հաստատման հետ։ Իսկ դրա համար պետք էր ոչ թե արտաքին միջամտություն, այլ Օսմանյան կայսրությունում բնակվող ազգերի համերաշխ պայքար։ «Պրոլետարիատը,— նշում էր «Պրավդան»,— բազմիցս իր բողոքն է արտահայտել Թուրքիայում կատարվող դազանությունների դեմ։ Առաջավոր բանվորները գիտակցում և անհրաժեշտ են գտնում Թուրքահայերի վիճակը փոխել Թուրքիայում հին կարգերի լրիվ վերակառուցման ուղիով։ Ընդ որում մարքսիստները

[29] „Путь правды", № 10, 1914.
[30] Նույն տեղում

հայտարարում են, որ Թուրքահայաստանի բախտը վճռելու գործում գլխավոր դերը կարող է և պետք է պատկանի իրենց Թուրքահայերին»[31]։ Դժբախտաբար սպասվող բարեփոխումները Թուրքիայում տեղի չունեցան և Թուրքահայերի հարցը լուծվեց չափազանց ողբերգական ձևով։

Այսպիսով, վերը շարադրածից երևում է, որ բոլշևիկյան «Պրավդան», 1912—1914 ԹԹ. սիստեմատիկաբար լուսաբանել է հայ իրականությունը։ Քննարկված հարցերի շրջանակները եղել են բավականին լայն ու հետաքրքիր։ 1912—1914 ԹԹ. բոլշևիկյան «Պրավդան» մեծ չափով նպաստել է հայ պրոլետարիատի դասակարգային ինքնագիտակցության բարձրացմանը, նրա ուժերի մոբիլիզացմանը և կազմակերպմանը։ Նա անգնահատելի օգնություն է ցույց տվել Հայաստանի բոլշևիկներին։ Դրանով իսկ «Պրավդան» անջնջելի հետք է թողել Հայաստանի ռևոլյուցիոն շարժումների պատմության մեջ։

---

[31] Նույն տեղում։